24532

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԱՐԲԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՇՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄ

ՀՐԱՀԱՆԳ

1941 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ ԴՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԱԾ ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ։

ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

331.88
Հ-99

ԵՐԵՎԱՆ 1940

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

331.88
2-99
14 JUN 2013
24532
15 JAN 2010

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԿՈՄ-ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ, ՏԵՂԿՈՄՆԵՐԻՆ ԵՎ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻՆ

ՀԱՄԿԿ-ի քարտուղարության որոշմամբ 1941 թ. հունվարի 1-ից սկսվում է 1940 թվին գործողության ժամկետը լրացած պրոֆմիութենական տոմսերի փոխանակումը, որը պետք է ավարտվի մինչև մարտի 1-ը։ Երկու ամսվա ընթացքում պետք է լրացնել և հանձնել պրոֆմիութենական բոլոր տոմսերը։

Այդ խնդիրը հաջողությամբ կատարելու համար շրջկոմներից, տեղկոմներից ու պրոֆկազմակերպիչներից պահանջվում է լուրջ նախապատրաստություն և ամենից առաջ մասսայական-բացատրական լայն աշխատանք կոլեկտիվներում։

Պրոֆմիութենական տոմսը այն փաստաթուղթն է, որը վկայում է թե տվյալ անձը պատկանում է սոցիալիզմի երկրի բանվոր դասակարգի ամենամասսայական, 25 միլիոնանոց կազմակերպությանը։

Անդամատոմսերի փոխանակման նվիրված կոլեկտիվի ժողովներում պարզաբանելով պրոֆմիությունների դերը կոմունիզմի շինարարության գործում, մասսաներին մոբիլիզացիայի ենթարկել պետական ուսումնական պլանները կատարելու համար։

Պրոֆմիութենական տոմսերի փոխանակման ժամանակը զուգադիպում է Ստալինյան երրորդ հնգամյակի չորրորդ տարվա առաջին ամիսներին։ Սոցիալիզմի երկիրը հնգամյակի չորրորդ տարին դիմավորում է նորանոր հաջողություններով, սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերում տեղի ունեցող աշխատանքային վերելքով։ Կազմակերպելով սոցիալիստական մրցակցության նոր վերելք, պրոֆմիությունները աջակցում են մեր հայրենիքի ռազմական հզորության ամրապնդմանը։

Կոլեկտիվներին ամրացված հասարակական ակտիվը պրոֆմիութենական տոմսերի փոխանակման նախապատրաստական շրջանում աշխատողներին պետք է ցույց տա, թե որքան մեծ են պրոֆմիության անդամների իրավունքները։ Յուրաքանչյուր կոլեկտիվ առատ նյութ է տալիս պրոֆմիության անդամների առավելությունների մասին։ Նրանց մոտ ժամանակավոր անաշխատունակության նպաստը երկու անգամ ավելի մեծ է, քան թե պրոֆմիության անդամ չհանդիսացողների մոտ։ Նրանց բացառիկ նախապատվություն է տրվում հանգստյան տներ, սանատորիաներ, կուրորտներ, իսկ երեխաներին պիոներական ճամբարներ ուղարկելու ժամանակ։

Պրոֆմիության անդամներն օգտվում են իրենց կազմակերպության ակումբներից, գրադարաններից, տուրիստական բազաներից և կուլտուրական այլ հիմնարկություններից։ Միայն մեր միության զծով 1940 թ. ծախսվել է 2.700.000 ռուբլի, որից սանատորիաների համար՝ 185 հազար ռ., հանգստյան տների համար՝ 255 հազար ռ., պիոներական ճամբարների համար՝ 592 հազար ռ., մանկական սանատորիաների համար՝ 28,000 ռուբլի, էքսկուրսիաների համար՝ 40.000 ռ., ժամանակավոր անաշխատունակության համար՝ 460.000 ռ., երեխաների արտադպրոցական կուլտ. բաստարկման համար՝ 55,000 ռուբլի և այլն, իսկ պրոֆմիության անդամավճար հավաքվել է ընդամենը 545.000 ռուբլի։

Սակայն չկա իրավունք առանց պարտականության—պրոֆմիության անդամը պետք է աղնիվ, գիտակից, սոցիալիստական վերաբերմունք ցույց տա դեպի աշխատանքը, խստիվ պահպանի պրոֆմիութենական դիսցիպլինան, ակտիվ կերպով մասնակցի միության աշխատանքներին, կենսագործի միության որոշումները, պարտաճանաչ և ժամանակին վճարի անդամավճարները։

Մեր միության մեջ ընդգրկված է աշխատողների 97 տոկոսը։ Շրջկոմները ու տեղկոմները մասսայական-բացատրական աշխատանքի միջոցով պետք է աշխատողներին 100 տոկոսով ընդգրկեն միության մեջ։

Ուղարկելով ՀԱՄԿԿ-ի քարտուղարության կողմից հաստատված պրոֆտոմսերի փոխանակման կարգի մասին հրահանգը, առաջարկվում է՝

1. Կոլեկտիվի նիստում զեկուցումներ տոմսերի փոխանակման մասին.

2. Կարգի բերել հաշվառման քարտերը և դրանք համեմատել պրոֆմիության անդամների փաստական թվի հետ։

3. Գանձել բոլոր անդամավճարներն առ 1-ը հունվարի 1941 թ.

4. Հավաքել բոլոր պրոֆտոմսերը և հաշվառման քարտերի հետ ներկայացնել շրջկոմին տոմսերը փոխանակելու և հաշվառման ենթարկելու համար։

Միության կենտկոմը համոզված է, որ անշեղորեն կենսագործելով ՀԱՄԿՄ-ի հրահանգը, հաջողությամբ կավարտվի տոմսերի փոխանակումը։

ՏՄԴ Առնմիության Կենտկոմի նախագահ՝ Հ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՏՄԴ Առնմ. Կենտկոմի գլխավոր քարտուղար՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

№ 107
23 դեկտեմբերի 1940 թ.
Երևան

Հաստատված է
ՀԱՄԿՄ-ի Քարտուղարության կողմից
9-դեկտեմբ. 1940 թ. (Արձանագր. № 487)։

ՀՐԱՀԱՆԳ

1941 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԱԾ ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ։

1. Պրոֆմիութենական տոմսերի փոխանակումը պետք է կատարել 1941 թ. հունվարի 1-ից մինչև մարտի 1-ը։ Փոխանակման ենթակա են պրոֆմիութենական այն տոմսերը, որոնց գործողության ժամկետը լրանում է 1940 թ.։

2. Մինչև անդամատոմսերի փոխանակումն սկսելը, գործարանային և տեղական կոմիտեները պետք է կարգի բերեն հաշվառման քարտերի կատալոգը և պետք է այդ քարտերը համեմատեն պրոֆմիութեան անդամների փաստական առկայության հետ։

3. Այն ձեռնարկություններում ու հիմնարկություններում, որտեղ աշխատում են պրոֆմիութեան ավելի քան 100 անդամ, անդամատոմսերի հանձնումը կատարում է ֆարգործարկոմի նախագահը, որն ստորագրում է անդամատոմսը և այն անձամբ հանձնում է պրոֆմիութեան անդամին։

4. Խոշոր ձեռնարկությունների այն ցեխերում, որոնք ունեն պրոֆմիութեան ավելի քան 500 անդամ, անդամատոմսերի հանձնումը պրոֆմիութեան Կենտկոմի հատուկ որոշմամբ, կարելի է վերավստահել ցեխային կոմիտեների նախագահներին, որոնք ստորագրում են անդամատոմսերը և անձամբ հանձնում են պրոֆմիութեան անդամներին։

5. Այն ձեռնարկություններում և հիմնարկություններում, որոնք ունեն պրոֆմիութեան մինչև 100 աշխատող անդամ, անդամատոմսերի հանձնումը կատարում է պրոֆմիութենական վերադաս օրգանը, այն է պրոֆմիութեան խմբկոմը, շրջկոմը, երկրային (մարզային) կամ Կենտրոնական Կոմիտեն։

Պրոֆմիութեան խմբկոմի կամ շրջկոմի նախագահը, մարզային (երկրային) կամ Կենտրոնական Կոմիտեի քարտուղարը ստորագրում է անդամատոմսը և այն ուղարկում է ֆարգործարկոմի նախագահին, որն անձամբ հանձնում է պրոֆմիութեան անդամին։

6. Անդամատոմսը լրացվում է աշխատանքի ժամերից դուրս պրոֆմիութեան անդամի ներկայությամբ (բացի այն դեպքերից, երբ անդամատոմսը լրացվում է ձեռնարկությունից կամ հիմնարկությունից դուրս)։

Անդամատոմսերի մեջ ոչ մի ուղղում և ջնջում չի թույլատրվում։

7. Անդամատոմսերը պետք է հանձնել պրոֆմիութեան անդամներին և պետք է նրանց ստորագրել տալ այն հատուկ մատյանում, որը պահվում է տրվող անդամատոմսերի հաշվառման համար։

7. Պրոֆմիութեան այն անդամների հաշվառման քարտերը, որոնք ձեռնարկությունից կամ հիմնարկությունից հեռացել են, բայց հաշվառումից չեն հանվել, ընդհանուր կարգով հանվում են մինչև պրոֆմիութեան հեռացած անդամը կգրի այդ

քարտը ստանալու համար, կամ մինչև որ պրոֆմիության այդ անդամների նոր աշխատանքի տեղից պրոֆմիութենական կազմակերպությունը քարտը կպահանջի։ Քարտերը պահվում են ոչ ավելի քան մեկ տարի։ Մեկ տարի անցնելուց հետո այդ քարտերը ոչնչացվում են։

9. Հաշվառման այն քարտերը, որոնց մեջ պրոֆմիութենական մարկաների արմատները փակցնելու համար նշանակված տեղն արդեն օգտագործվել է, պետք է փոխարինել նոր քարտերով։

Նոր քարտերում ֆաբգործարկոմի գանձապահը (կամ ցեխային կոմիտեի նախագահը) նշում է, թե վերջին անդամ, որ ամսվա համար է անդամավճար մուծել։

Հաշվառման հին քարտերը ոչնչացվում են։

10. Պրոֆմիութենական նոր անդամատոմսերը պետք է լրացնել հին անդամատոմսերի հիման վրա, բացի հետևյալ դեպքերից.

ա) Եթե պրոֆմիության անդամը ազգանունը կամ անունը փոխել է և այդ փոփոխությունը հաստատվում է փաստաթղթերով և մտցվել է պասպորտի մեջ, ապա նոր անդամատոմսի մեջ պետք է կատարել համապատասխան փոփոխություններ։

բ) Եթե հին անդամատոմսը լրացնելու ժամանակ սխալներ են թույլ տրվել, ապա նոր անդամատոմսի մեջ սխալներն ուղղվում են ներկայացված փաստաթղթերի համաձայն։

11. Պրոֆմիության անդամատոմսը պետք է լրացնել սև կամ մանուշակագույն թանաքով։

Անդամատոմսի մեջ ուղղումներ և ջնջումներ չեն թույլատրվում։

12. Նոր անդամատոմսի մեջ պրոֆմիութենական մարկաները փակցնելու համար նշանակված վանդակների լայնքով, այն ամիսների համար, որոնց անդամավճարը մուծված է, ֆաբգործարկոմի նախագահը (կամ պրոֆմիութենական անդամատոմսեր տալու իրավունք ունեցող մի այլ անձ) մակագրում է «անդամավճարը մուծված է հին տոմսի մեջ մինչև այսինչ ամիսը ներառյալ (ցույց տալ ամիսը և ամսաթիվը)» և վավերացնում է իր ստորագրությամբ ու կնքում ֆաբգործարկոմի կնիքով։

13. Նոր անդամատոմս տալու ժամանակ ֆաբբիկա-գործարանային տեղական կոմիտեի նախագահը (կամ անդամատոմս տալու իրավունք ունեցող մի այլ անձ) այդպիսին համեմատում է հին անդամատոմսի և հաշվառման քարտի հետ։ Նոր անդամատոմսի համարը պետք է նշանակել հաշվառման քարտի մեջ։ Հին անդամատոմսը պետք է ոչնչացնել։ Այդ նպատակով հին

անդամատոմսի առաջին էջի վրա պետք է խաչ քաշել և վրան մակագրել—«անվավեր է»։

14. Անդամատոմսերի փոխանակման ժամանակ հաշվառման քարտում պետք է լրացնել բոլոր սյունյակները, ինչպես և մտցնել այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են նոր անդամատոմսի մեջ հնի համեմատությամբ։

15. Տրված նոր անդամատոմսի համար պրոֆմիության անդամից գանձվում է 50 կոպեկ։ Պրոֆմիության անդամատոմսերի համար պրոֆմիության անդամներից գանձված փողը ֆաբգործարկոմ-տեղկոմները փոխանցում են պրոֆմիության մարզկոմներին, երկրկոմներին և կենտկոմներին։

16. Ժամանակավորապես չաշխատող պրոֆմիության անդամները անդամատոմսերը փոխանակում են պրոֆմիութենական այն կազմակերպություններում, որոնց մեջ նրանք հաշվի են առնված։

Պրոֆմիության անդամ սեզոնային բանվորները անդամատոմսերը փոխանակում են 1941 թ. աշխատանքի անցնելուց հետո։

17. Պրոֆմիության այն անդամների անդամատոմսերը, որոնք չեն կարողացել ժամանակին նոր անդամատոմս ստանալ գործուղման, հիվանդության, հերթական արձակուրդի կամ այլ հարգելի պատճառներով, պետք է փոխանակել ընթացիկ աշխատանքի կարգով։

18. Այն հին անդամատոմսերը, որոնք հանձնվել են պրոֆմիության անդամների կողմից, ինչպես և հաշվառման այն քարտերը, որոնք փոխարինվել են նոր քարտերով, անդամատոմսերի փոխանակման ամբողջ աշխատանքը ավարտելուց երեք ամիս հետո այրվում են այն անձի կողմից, որը պատասխանատու է անդամատոմսերի պահպանման համար՝ վերստուգիչ հանձնաժողովի նախագահի ներկայությամբ։ Հաշվառման քարտերը և պրոֆմիութենական հին անդամատոմսերը ոչնչացնելու մասին պետք է կազմել ակտ, տալով այրված անդամատոմսերի համարները։

19. Անդամատոմսերի փոխանակումը ավարտելուց հետո պրոֆմիութենական կազմակերպությունները վերադաս պրոֆմիութենական կազմակերպությանը հաշիվ են տալիս փոխանակման արդյունքների մասին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0196800

БИБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

2Ր Ի

2505

ИНСТРУКЦИЯ

О порядке проведения обмена профсоюзных билетов, срок действия которых истекает 1 января 1941 года.

Ս. տպրիչ՝ Վ. Պողոսյան
Պ. 2744, պատվեր № 323, տիրաժ 1200

Լոս հրատի տպարան, Երևան, Տերյան № 127